մարտի էին, յանկարծակի երեւեցաւ նշան 'ի Տեառնէ. զի 'ի Ս. Սիոն 'ի քրիստոսազարդ սեանէ ջուր բղխեաց վերուստ 'ի վայր։ Եւ տեսեալ պաշտօնէից ազգ արարին ամենեցուն, և նոքա հասանէին անդր բազմութեամբ տեսանել զքանչելիսն, զոր Տէր եցոյց հաւատացելոց զորութեամբ իւրով՝ յամօթ և 'ի նախատինս հակառակորդաց. և օծանէին ամենեքեան ջրովն և փառաւոր առնէին զԱստուած։ Տեսեալ դքսին և զօրացն՝ ահիւ և դողութեամբ անկանէին 'ի Ս. Սիոն և առաջի սուրբ սեանն ծունր եդեալ խնդրէին զթողութիւն 'ի Տեառնէ, և ժողովուրդն կատարեաց զՏօն Տեառնընդառաջին ըստ Ցայտնութեան 'ի փառս Քրիստոսի։

Այս նշան և զօրութիւն եղեւ առ Ցուստոս հայրապետիւ։ Իսկ յամին երկրորդի Մակարիոս անուն ոմն յաջորդեաց զաթոռն, եւ վերստին յուղեցաւ խռովութիւն 'ի մերձենալ տօնին. եւ կայսրն դարձեալ առաքեաց զօրս շարժեալ 'ի բանսարկուէն, կատարել զտօնն ըստ կամաց իւրոց. հասին զօրքն, հայրապետն, դուքսն եւ այլ իշխանք, որք առաքեցան 'ի Թադաւորէն, զի տացեն կատարել բռնութեամբ զտօն Տեառնընդառաջին ըստ Ծննդեան, որպէս հրամայեալ էր Կայսրն։ Ցայնժամ Երուսաղէմացիքն պնդեալ նովին հաւատով և բազմութեամբ յեկեղեցիս հասանէին, և անկեալ առաջի սեղանոյն արտասուօք հայցէին զօգնութիւն 'ի Տեառնէ. որպէս եցոյց զզօրութիւն իւր յառաջնումն։ Եւ էր աղաղակ մեծ և խռովութիւն յԵրուսաղէմ. եւ ընտրեցին առ հասարակ զմահ քան կատարել զտօնս խղճիւ, եւ յեկեղեցիսն ոչ լինէր լսելի ձայն պաշտաման, այլ լալոց եւ ողբոց, եւ զլինեալ զօրքն կային 'ի դուռս եկեղեցւոյ ահ արկանել. բայց նոցա չէր ինչ փոյթ։ Տեսեալ հայրապետին և դքսին զՍերմեռանդ հաւատս ժողովրդոցն, ձայն բարձեալ ասեն՝ դադարեսցի 'ի ձէնջ աղաղակդ և խռովութիւնդ, զի որպէս Տէր հրամայեսցէ այնպէս արասցուք։ Եւ եպիսկոպոս ոմն ետես 'ի խորհուրդ պատարագին զնմանութիւն հրեշտակի 'ի Ս. Գողգոթայն և 'ի Ս. դուռն Տեառն. և եհաս մինչեւ յերկրորդ դուռն մատրան եւ եհար զաջ բազուկն իւր 'ի նա, և անդէն բեւեռեցաւ աջ Տեառն 'ի վերայ սեանն, և ինքն